

նապարհո՛րդ խաղաղութեան»: 23 Եւ նա ասէ. «Բարւոք³ գտաք⁴ զձեզ, աւթեալն⁵ ք Յոգ-
ւոյն Սրբոյ⁵ եւ ճրա՛գք⁶ լուսոյ⁷: 24 Այլ⁸ աւետիք⁹ ձեզ, զի սուրբն¹⁰ Գրիգոր եւ Տրդատ
թագաւորն¹¹ ի¹² բնակութիւնս ձեր եկեալ են¹³ եւ յոյժ խնդրեն զձեզ»: 25 Իսկ նոքա ա-
սեն¹⁴. «Եւ ձեզ՝ աւետիք¹⁵, զի սատանայ կործանեցաւ, եւ Աստուած այսաւր կրկին ու-
րախութեամբ լցեալ՝ զՀոգին Սուրբ առաքեաց ի վերայ աշխարհիս Հայոց եւ նոյն ժա-
մայն¹⁶ լցոյց զարարածս իջմամբ Սուրբ Հոգոյն»: 26 Եւ կոչեցաւ տեղին¹⁷ այն Աւետեաց
բլուր:

27 Եւ առաքեաց Աղբիանոս առ մեզ¹⁸ զերկու¹⁹ սարկաւագսն²⁰ աւետաւորս, զոր
լուեալ մեր²¹ յոյժ ուրախ եղաք²²: 28 Եւ դարձեալ զնոյն սարկաւագսն²³ առաքեաց
սուրբն Գրիգոր աւետաւորս²⁴ առ թագաւորն²⁵, ի ստորոտ²⁶ Արձանին²⁷, զոր²⁸ յոյժ ու-
րախացեալ խնդացեալ²⁹ եկն ի վանսն³⁰ հանդերձ գլխաւոր իշխանաւք³¹: 29 Իսկ զտե-
ղին³², ուր զաւետիսն³³ ետուն, հրամայեաց վեմս ժողովել բլրածեւ³⁴ եւ կանգնեաց անդ
նշան խաչի³⁵, զոր եւ³⁶ կոչեմք¹ Աւետեաց խաչ²:

1 *օ* աղաւթել

2 *bl* ցնդբիանոս Անտոն *ի/ս* Անտոն ցնդբիանոս

3 *h* բարիօք

4 *bhmo* գտա *ի/ս* գտաք (*lsv*)

5 *bmv* աւթեվանք Սրբոյ Հոգւոյն *ի/ս* աւթեանք Հոգւոյն Սրբոյ (*lhso*)

6 *h* ճրագ

7 *s* լուսոյս

8 *hmov* Այլ եւ

9 */* աւետիս

10 *hmv* սուրբ

11 *hmo* չիք թագաւորն

12 *h* չիք ի

13 *v* են եկեալ *ի/ս* եկեալ են */ s* եկեալ են ի բնակութիւնս ձեր *ի/ս* ի բնակութիւնս ձեր եկեալ են

14 *m* ասեին

15 *hm* աւետիս

16 *s* յաշխարհս Հայոց *ի/ս* ի վերայ ... ժամայն (*bl*) */ hmov* չիք լցեալ զՀոգին ... ժամայն (*2 unny*)

17 *bhmo* բլուրն *ի/ս* տեղին (*lsv*)

18 *bhmo* չիք առ մեզ

19 *m* զերկուս

20 */* սարկաւագն, *b* սարկաւագքն, *h* սարկաւագս *ի/ս* սարկաւագսն (*msov*)

21 *hmo* չիք մեր

22 *օ* ուրախացաք *ի/ս* ուրախ եղաք

23 *sv* սարկաւագունսն

24 *m* աւետաւորս առաքեաց սուրբն Գրիգոր *ի/ս* առաքեաց ... աւետաւորս */ օ* չիք առաքեաց սուրբն ... աւետաւորս

25 *hmo* Տրդատ *ի/ս* թագաւորն (*blv*)

26 *h* ստորոտս

27 *s* չիք ի ստորոտ Արձանին

28 *v* որ *ի/ս* զոր

29 *s* խնդացեալ, *hvm* խնդութեամբ լցեալ (*h* լցաւ) *ի/ս* ուրախացեալ խնդացեալ (*bl*)

30 *ho* վանս

31 *hmov* իշխանաւքն

32 *v* ի տեղին

33 */* աւետիսն

34 *sv* բլրածեւ *ի/ս* բլրածեւ (*bl*)

35 *hmo* չիք բլրածեւ ... նշան խաչի

36 *s* չիք եւ